

**ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

ՀՏԴ 378.4:001.81

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ
ԽՈՍՔԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դիտարկվում են բուհի կրթական ծրագրերում գիտական գրավոր խոսքի ուսուցման անհրաժեշտությունն ու առանձնահատկությունները: Տեխնիկական բուհում ակադեմիական գրագրության արդյունավետ ուսուցման համար առաջարկվում է հայոց լեզվի դասընթացի եղած ժամաքանակի առավել նպատակահարմար վերաբաշխման տարբերակ բակավարատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում:

Առանցքային բառեր. կրթական ծրագրեր, գիտական տեքստ, բովանդակային և լեզվաոճական պահանջներ, ժամաքանակի նպատակահարմար բաշխում:

Ակադեմիական գրագրությունը կամ գիտական տեքստի կազմումը գիտությանը զբաղվող յուրաքանչյուր մասնագետի գործունեության անկապտելի մասն է՝ թելադրված իր ստեղծագործությունը կամ հայտնագործությունը հանրությանը գրավոր ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Գիտական տեքստը գրավոր խոսքի տարատեսակություններից մեկն է, որով վերարտադրվում է ստեղծագործողի գիտական աշխատանքը: Գրավոր խոսքը ցայտուն կերպով երևան է հանում մարդու մտածողության և դրան համապատասխան լեզվամիջոցների գործադրման կարողությունները: Գրագետ, ճիշտ ձևակերպված գրավոր խոսքը մարդու գիտելիքների և լեզվամտածողության, առհասարակ մտավոր զարգացման վկայությունն է: Յավոք, այսօր ոչ միայն ուսանողների, այլև ասպիրանտական կրթական ծրագրով սովորողների մի զգալի մասը չի կարողանում գրավոր շարադրել իր մտքերը: Պատճառները հայտնի են. դպրոցը պատշաճ կերպով չի մատուցել, կամ աշակերտները թույլ են յուրացրել լեզվական գիտելիքները, ինչպես և ընթերցանության պակասը, որի հետևանքով չի զարգացել սովորողների լեզվամտածողությունը, լեզվի բառապաշարն ու քերականական կառույցները չեն դարձել նրանց «սեփականությունը»: Դրա փոխարեն՝ շատերի մեջ ամուր նստած է ժարգոնային բառապաշարը: Եվ զարմանալի չէ, որ նման ուսանողը կամ ապագա մասնագետը փնտրում, բայց չի գտնում համապատասխան բառը, չի կարողանում լեզվի նոր-

մատիվ ձևերին՝ քերականությանը համապատասխան ձևակերպել իր մտքերը: Բնականաբար, ամենակարևոր ու պատասխանատու իրավիճակներում (գիտելիքների ստուգում, ատենախոսության ներկայացում և այլն) կարող է տպավորություն առաջանալ, որ ապագա հետազոտողը հստակ չի պատկերացնում կամ չգիտի մասնագիտությունից իր ասելիքը:

Գիտական տեքստի ուսուցումը պոլիտեխնիկական բուհի երկու՝ բակալավրական և ասպիրանտական կրթական աստիճաններում իրագործվում է հայոց լեզվի ամբիոնի կողմից: Բնականաբար, տարբեր աստիճաններում տարբեր են դրանց հատկացված ժամաքանակները և նյութի մատուցման խորությունը: Հայոց լեզվի ուսուցումը, «Լեզվի մասին» պետական օրենքին համապատասխան, դեռևս 1990-ական թվականներից Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, ըստ բակալավրական կրթական ուսումնական պլանի և դասընթացի ծրագրի [1], հարմարեցված է տեխնիկական բուհի ուղղվածությանը, և առարկայական ծրագրով նախատեսված թեմաները կոչված են նպաստելու ոչ միայն ուսանողների խոսքի մշակույթի, մայրենի լեզվի համակարգի ու կառուցվածքի իմացության, լեզվական ընդհանուր զարգացածության և գրագիտության ապահովմանը, այլև տեխնիկական մասնագետին իր ապագա գործունեության ընթացքում խիստ անհրաժեշտ գիտելիքի ուսուցմանը: Մասնավորապես, ծրագրում լեզվական ընդհանուր, կիրառական գիտելիքի հաղորդմանը զուգահեռ, ընդգրկված են նաև «Գիտական տեքստ», «Տերմինաբանություն», «Թարգմանություն» և «Խմբագրում» թեմաները: Սակայն բակալավրատի առաջին կուրսում, չնայած ամբիոնի կողմից մշակված և գործածվող «Գործարար և գիտական հայոց լեզու» ուսումնական ձեռնարկում [2] գիտական տեքստի և տերմինաբանության բավականաչափ ընդգրկումն ներկայացմանը, դրա ուսուցումը մակերեսային բնույթ է կրում, քանի որ առաջին կուրսեցին դեռևս պատկերացում չունի ո՛չ իր մասնագիտության ու մասնագիտական տերմինների և ո՛չ էլ գիտական աշխատանքի կատարման հիմունքների վերաբերյալ: Ավելին, ուսանողները դժվարությամբ են լսում, ձանձրանում են և չեն ուզում կատարել համապատասխան թեմաներից գործնական աշխատանքները: Այս թեմաների ուսուցումն այն դեպքը չէ, որը մանկավարժության մեջ կոչվում է առաջանցիկ ուսուցում: Առաջանցիկ ուսուցումը ենթադրում է տվյալ թեմայից սովորողների նախնական որոշակի գիտելիքի՝ որպես հետագա գիտելիքի ձեռքբերման հիմքի առկայություն: Իսկ տերմինաբանության և գիտական տեքստի ուսուցման հիմքը պիտի լինի համապատասխան մասնագիտական գիտելիքների գոնե տարրական մակարդակի առկայությունը, որը, բնականաբար, չի կարող ունենալ առաջին կուրսի ուսանողը: Ստացվում է, որ ապագա մասնագետին խիստ ան-

հրաժեշտ գիտելիքը հաղորդվում է ոչ իր տեղում, և վատնվում է թե՛ ուսանողի, թե՛ առարկայի համար նախատեսված թանկ ժամանակը:

Հայոց լեզվի ուսուցումը, ընդհատվելով կրթական երկրորդ աստիճանում, շարունակվում է երրորդ աստիճանում՝ «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի (ասպիրանտուրա և հայցորդություն)» ուսումնական պլանով նախատեսված [3] «Ատենախոսական աշխատանքի ձևավորման, ձևակերպման և ներկայացման մեթոդաբանական սեմինարներ (ըստ բնագավառների)» դասընթացի ծրագրով: Դասընթացի նպատակն է սովորողների գրագիտության, գիտական գրավոր խոսքի զարգացումը, կատարվող գիտական հետազոտությունների լեզվական ձևակերպումների մակարդակի բարձրացումը: Դասընթացն ապահովված է համապատասխան մեթոդական գրականությամբ՝ տեխնիկական բուհերի համար նախատեսված ուսումնական ձեռնարկով [4] և դասագրքով [5]:

Ակադեմիական գրագրության կամ գիտական գրավոր հաղորդակցության առանցքը կազմում են գիտական տեքստի կազմության որոշակի յուրահատկությունները, որոնց իմացությունը պահանջում է ինչպես գիտական ոճի, տերմինաբանության գործադրման, այնպես էլ առհասարակ գրավոր խոսքի կառուցման առանձնահատկությունների ուսուցում: Դասընթացը յուրացնելով՝ սովորողը պետք է ձեռք բերի գիտական աշխատանքի՝ հայերեն գրագետ ձևակերպման հմտություններ, գիտական աշխատանքի ներկայացման կարողություններ, գիտական տեքստում գիտական ոճի, տերմինների գործածության, տեքստի թարգմանության և խմբագրման ունակություններ: Այս վերջնարդյունքին հասնելու համար սովորողը պետք է ճանաչի գիտական գրավոր խոսքի կառուցման որոշակի առանձնահատկությունները:

Այդ նպատակով ուսումնասիրվող թեմաներն են [4,5]. տրվում է գաղափար գիտական տեքստի մասին, քննվում են գիտական տեքստի ներքին՝ բովանդակային և արտաքին կառուցվածքը, գիտական տարատեսակ տեքստերի, մասնագիտական տերմինների իմաստաբանական, կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, գիտական տեքստի լեզվաոճական յուրահատկությունները, կատարվում են այլալեզու գիտական տեքստերի թարգմանություններ և խմբագրում: Ինչպես տեսնում ենք, ասպիրանտական կրթական աստիճանում դասընթացն ամբողջությամբ նվիրված է ակադեմիական գրագրության ուսուցմանը, ուստիև իրականացվում է առավել խորությամբ ու նպատակային կերպով: Միաժամանակ, նշված թեմաներն ընդհանուր են բակալավրական ծրագրի նույն թեմաների հետ, բայց քանի որ ասպիրանտը բակալավրատի առաջին կուրսում դրանք ըստ ամենայնի չի գիտակցել, հետևապես նաև չի յուրացրել, ապա սեմինար պարապմունքներն ընթանում են ոչ միայն նշված

թեմաների գործնական քննարկումներով, այլև գիտական տեքստի վերաբերյալ տեսական դրույթների հաղորդմամբ 32 ժամ տևող դասընթացի շրջանակում:

Գիտական տեքստը գրվում է գիտական ոճով: Ուստի այս ոճի որոշակի նրբություններին տիրապետումը կարող է օգնել ապագա մասնագետին՝ հստակ շարադրելու իր մտքերը: Բնականաբար, շարադրանքին նախորդում է մասնագետի կողմից գիտական աշխատանքի որոշակի պահանջների կատարումը [4,6,7]. 1. գիտակցել և առաջադրել գիտական հիմնախնդիրը, 2. կուտակել փաստեր, որոնք հիմնախնդրի լուծման միջոցներ (մեթոդներ), առաջադրել վարկած, ապացուցել և հիմնավորել նոր գաղափարը, 3. լուծել հիմնախնդիրը՝ տալով առաջադրված հիմնահարցի պատասխանը: Այս ամենն իր արտացոլումն է գտնում գիտական տեքստում՝ գիտական գրավոր խոսքի ձևակերպման միջոցով: Աշխատանքի այս հերթականությունը սովորաբար պահանջում է նաև գիտական տեքստի շարադրման նույնական հերթականություն:

Գիտական աշխատանքում կատարվող քայլերի այդ հաջորդականությամբ և բովանդակությամբ են պայմանավորված ինչպես գիտական տարբեր ենթաոճերի, այնպես էլ տարբեր տեսակային-ժանրային տեքստերի առանձնահատկությունները: Կարևոր է, որ մասնագետը տարբերակի բուն գիտական, ուսումնագիտական, գիտահանրամատչելի ենթաոճերով տեքստերին ներկայացվող պահանջները, որպեսզի բուն գիտական տեքստում անհարկի չներառի ուսումնական տեքստերից հայտնի տեղեկությունները կամ չշարադրի տեքստը գիտահանրամատչելի ոճով: Նույնքան անհրաժեշտ է նաև, որ ճանաչի գիտական տեքստերի ժանրային յուրահատկությունները (օրինակ, կառուցվածքային ինչպիսի նմանություններ կամ տարբերություններ ունեն մենագրությունը, ատենախոսությունը և հոդվածը, ինչպես պետք է գրել անոտացիա, թեզիս, զեկուցում և այլն [4,6,7,8]):

Շարադրանքի կուռ հերթականությունից բացի, կան գիտական տեքստի բովանդակային կառուցմանը ներկայացվող այլ պահանջներ ևս [4,6,7,8]. 1. գործադրել մտահանգման, մակաձման, արտաձման, մտովի մոդելավորման, ձևականացման, իդեալականացման գործողություններ, երևույթների ուսումնասիրությունը կատարել՝ մասնավորից, եզակիից գնալով ընդհանուրը, քանակական առնչություններից բխեցնել որակական օրինաչափությունները, ասելիքը կառուցել պարզից բարդը ընթացող բաշխվածությամբ՝ նյութը ներկայացնելով ստորակարգային եղանակով. 2. հարցը ներկայացնել որոշակի իմաստային հատվածների, միմյանց հետ տրամաբանորեն կապված բաղադրամասերի հաջորդականությամբ, մասնավոր փաստերից ելնելով՝ կատարել ընդհանրացումներ կամ հակառակը՝ ընդհանուրից գնալով մասնավորը՝ փաստարկել տեսական դրույթները. 3. փաստերն ու իրողությունները նկարագրել ճշգրտորեն՝ առանց աղա-

վաղելու դրանք, որքան էլ որ անսպասելի կամ ակնկալվող ելքին հակառակ լինեն դրանցից բխող եզրակացությունները, քանի որ հակառակ եզրակացություններն էլ կարող են հանգեցնել գիտության մեջ նորույթի հայտնաբերմանը. 4. ձեռնպահ մնալ հեղինակային-անհատական վերաբերմունք արտահայտելուց, ներկայացնել հարցն այնպես, ինչպես որ կա իրականության մեջ, իսկ եզրակացությունները բխեցնել շարադրանքի բուն բովանդակությունից. 5. գործածել տվյալ գիտության հասկացությունները նշանակող ընդունված տերմիններն ու մասնագիտական բառապաշար, որոնք ապահովում են գիտական խոսքին ներկայացվող վերացարկվածության, ճշգրտության, հստակության պահանջները և այլն [4, 8]:

Վերոշարադրյալը գիտական ոճի առանձնահատկություններից բխող ոճական-բովանդակային պահանջներն են՝ համաձայն որոնց կառուցվում է գիտական տեքստը: Միաժամանակ, գիտական տեքստի շարադրման ճշգրտությունն ապահովվում է նաև լեզվաոճական պահանջների խստով պահպանմամբ. 1. տեքստը շարադրել գիտական ոճի պահանջներին համապատասխան՝ լեզվական առումով հստակ ու հասկանալի ներկայացնելով ասելիքը. 2. պահպանել գրական լեզվի կանոնավորությունը, ուղղագրական, կետադրական և քերականական կանոնները, օգտագործել բառապաշարի գրական-գրքային բառաշերտը, համագործածական շերտի ոճականորեն չեզոք հոմանիշները. 3. բառերը գործածել իրենց ուղիղ, անվանողական նշանակություններով՝ բացառելով դրանց փոխաբերական իմաստները, 4. օգտագործել դատողական, մեկնական, ընդհանրացնող, վերացական նշանակությամբ բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ, պատճառահետևանքային կապ ապահովող շաղկապներ, 5. նյութը շարադրել կոնկրետ, սեղմ, առանց ավելորդ մանրամասների և անհարկի կրկնությունների՝ բացառելով մակաբույծ բառերը. հաճախադեպ օգտագործել դերբայական դարձվածները, բազմաբարդ նախադասություններում կիրառել կայուն շարադասություն և այլն [4]:

Ինչպես նշվեց, և՛ բակալավրական, և՛ հետազոտողի կրթական աստիճանների վերոհիշյալ դասընթացներում առանձին թեմա է նվիրված նաև տերմինագիտության հիմունքների և մասնագիտական տերմինաբանության ուսուցմանը:

Տերմինաբանության ուսուցման նպատակը սովորողների կողմից տերմինագիտության հիմունքների և իրենց մասնագիտական տերմինաբանության խոր ու համակողմանի յուրացմանը նպաստելն է [5]: Դրա իրականացման ճանապարհը դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման հատկապես ինտերակտիվ մեթոդների ու նորագույն հնարների նպատակահարմար համադրումն ու

գործադրումն է [9]: Այդ նպատակով թեման տեխնիկական լսարանում ուսուցանելու համար տերմինները բացատրելիս մեթոդապես առավել արդյունավետ կլինի շեշտադրել և ակնառու դարձնել դրանց իմաստաբանական առանձնահատկությունները՝ «հասկացություն-տերմին-սահմանում» ըմբռնումները, տերմինների՝ «սեռի-դասի-ենթադասի-տեսակի» հարաբերությունները [5]: Մասնագիտական գիտելիքների յուրացմանը նպաստում է տվյալ գիտության հասկացությունները նշանակող տերմինների հատկապես իմաստային ստորակարգության և համակարգայնության ճանաչումը: (Օրինակ՝ բակլավրատում, քանի որ դասընթացն առաջին կուրսում է, և դեռ մասնագիտական դասընթացներ չեն ուսումնասիրվում, կարելի է քննել՝ ինչ է նշանակում և մաթեմատիկայի որ բաժիններում է գործածվում, ասենք, «եռանկյուն» տերմինը, այն ինչպիսի առնչության՝ ստորակարգության և համակարգայնության մեջ է գտնվում մաթեմատիկայի այլ տերմինների շարքում, հասկացական-տերմինային ինչպիսի նոր շարքի առաջացման հիմք է հանդիսացել և այլն, իսկ հետազոտողի աստիճանում՝ կատարել բուն մասնագիտական տերմինների ավելի ընդգրկուն ու խոր քննություն): Մի կողմից՝ դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների ճիշտ համադրումը, մյուս կողմից՝ բանասեր և մասնագետ դասախոսների ջանքերի միավորումը կնպաստեն տերմինաբանությանը նվիրված դասերի նպատակահարմար ու արդյունավետ կազմակերպմանը, ինչը երաշխիք է սովորողների կողմից մասնագիտական հասկացությունների տիրապետման, թեմայի խորապես յուրացման և ցանկալի արդյունքների ապահովման համար:

Կարևոր է նաև, որ մասնագետն իմանա իր բնագավառի տերմինների կառուցվածքային առանձնահատկությունները, քանի որ հաճախ անհրաժեշտ է լինում ճշտել տերմինի կառուցվածքը, որով պայմանավորված է նրա իմաստը (օրինակ՝ որ դեպքում գործածել *նվազեցում* տերմինը, և որ դեպքում՝ *նվազարկում* ձևը: Երկուսն էլ վաղուց ի վեր գոյության իրավունք են ձեռք բերել մեր լեզվում, սակայն ունեն իմաստային որոշակի նրբերանգներ. *նվազեցում* (*уменьшение*) - կոնկրետ որևէ առարկայի կամ երևույթի չափումային հատկանիշ(ներ)ի աստիճանաբար, բնական ճանապարհով նվազելը կամ մարդու կողմից նվազեցնելը, *նվազարկում* (*минимизация*) – առարկայի կամ երևույթի չափումային հատկանիշ(ներ)ի՝ մարդու կողմից միանգամից (մեկ գործողությամբ) նվազագույն դարձնելը և այլն):

Չի բացառվում նաև, որ մասնագետի աշխատանքի ընթացքում առաջանա տերմին(ներ)ի թարգմանության անհրաժեշտություն: Այստեղ ևս նրան օգտակար կլինի տերմինների կառուցվածքային առանձնահատկությունների իմացությունը (մասնավորապես՝ որ բառի կամ արմատի դեպքում որ ածանցի միացումը

ինչ նոր իմաստ կարող է ապահովել, ինչպես են հայերենում կազմվում բաղադրյալ բառերը, եղած տերմինները ճիշտ են կառուցված լեզվականորեն և ճիշտ են արտահայտում իրենց հասկացությունների բովանդակությունը և այլն):

Ինչ խոսք, այս կանոնների զուտ թվակումը կամ սերտումը մարդուն դեռևս գրագետ չեն դարձնում: Գրագիտությունն ապահովվում է պարբերական վարժանքներով: Սակայն ուսումնառության նախորդ փուլերում բաց թողած լեզվական գիտելիքները հասուն մասնագետը կարող է լրացնել ավելի կարճ ճանապարհով՝ 1. լեզվաբան մասնագետի հետ կատարելով ինքնուրույն և թարգմանական տեքստերի խմբագրում՝ ակնառու տեսնելով սխալներն ու դրանց ուղղվող ձևերը, 2. կոնկրետ սխալների խմբագրմամբ և սրբագրմամբ յուրացնելով լեզվամիջոցների գործնականում կիրառման առանձնահատկությունները՝ առանց ժամանակ վատնելու քերականական կանոնների սերտման վրա:

Մասնագիտական տեքստերի և հատկապես տերմինների վերը նշված քննական աշխատանքը խիստ նպատակահարմար կլինի կատարել մագիստրատուրայում, երբ ուսանողն արդեն ունի մասնագիտական գիտելիքների որոշակի հիմք և շարունակում է խորացնել ու ձեռք բերել նոր գիտելիքներ: Տեխնիկական բուհում, առանց հայոց լեզվին լրացուցիչ ժամաքանակ հատկացնելու, կարելի է ավելի նպատակահարմար վերաբաշխել եղածը. «Հայոց լեզու և գրականություն» դասընթացից հանել գրականություն բաղադրիչը, քանի որ ՀՀ «Լեզվի մասին» ակտական օրենքը ոչ մասնագիտական բուհերում նախատեսում է դասընթաց միայն հայոց լեզվից: Բակալավրական դասընթացի 64 ժամից 32-ը հատկացնել մագիստրատուրայում տերմինագիտության հարցերի քննությանը և մասնագիտական տեքստերի գործնական թարգմանությունների կատարմանը: Իսկ բակալավրատում 32 ժամն ուղղել առավել ընդհանուր լեզվական գիտելիքների՝ խոսքի մշակույթի, վարչագործարարական ոճի և փաստաթղթավարության, առհասարակ սովորողների գրագիտության մակարդակն ապահովող գիտելիքների ուսուցմանը այնքան ժամանակ, քանի դեռ չի բարելավվել մայրենիի ուսուցման մակարդակը հանրակրթության աստիճանում: Սակայն կարծում ենք՝ առավել նպատակահարմար կլինի ընդհանուր ժամաքանակի վերաբաշխումը մի փոքր այլ սեխեմայով. բակալավրատում 32 ժամ տևող դասընթացը տեղափոխել բարձր՝ 3-րդ կամ 4-րդ կուրսեր՝ տրամադրելով գիտական գրավոր խոսքի ուսուցմանը, որպեսզի մասնագիտական լեզվի ուսուցումը բակալավրատում, մագիստրատուրայի առաջին և ասպիրանտուրայի առաջին կուրսերում կազմի մեկ ամբողջական շղթա: Ոչ մասնագիտական բուհերում հայոց լեզվի դասընթացին տրամադրվող սուղ ժամաքանակը պետք է բաշխվի խիստ նպատակային, որպեսզի կրթական տարբեր աստիճաններում սովորողները ձեռք

բերեն իրենց նախորդ գիտելիքների հիմքին համապատասխան նոր գիտելիքներ: Այդ դեպքում հնարավոր կլինի դասընթացները գիտականորեն և մասնագիտորեն հիմնավորված կերպով ուղղել տեխնիկական մասնագետին անհրաժեշտ լեզվական-կիրառական գիտելիքների, դրանք են՝ գիտական ոճի և գիտական տեքստի, գիտատեխնիկական տերմինաբանության և տեխնիկական տեքստերի կազմման, թարգմանության ու խմբագրման առանձնահատկությունների գործնական ուսուցմանը:

Ինչպես ամեն մի գիտելիք, այնպես էլ լեզվական գիտելիքները ենթակա են անընդհատ կատարելագործման պահանջին: Լեզվական ունակությունները հղկվում են անընդհատ գործադրվելով: Մարդու լեզվական գիտելիքների, մանավանդ գիտական ոճի կիրառության և գիտական տեքստի կառուցման հմտությունների ձեռքբերումը չի իրագործվում և չի էլ կարող իրագործվել հանրակրթական փուլում, քանզի դպրոցում աշակերտի առջև գիտական աշխատանքով զբաղվելու խնդիր չի դրվում, ուստի և մասնագիտական լեզուն գործադրելու անհրաժեշտություն չկա: Հետևապես, որքան էլ դպրոցում լեզվական ուսուցման գործընթացը կատարելագործվի, միևնույնն է, բուհում մասնագիտական լեզվի ուսուցման պահանջը մնալու է օրակարգում. ապագա մասնագետը, արդեն հասուն տարիքում գիտակցելով իր առջև կանգնած խնդիրները, կարիք ունի մայրենիով լսելու գիտական տեքստի կառուցման տեսությունը: Հենց մայրենիով, քանզի օտար լեզուներին միայն այս կամ այն չափով տիրապետող սովորողը որևէ տեսություն կարող է խորապես ըմբռնել իր լեզվամտածողության, այն է՝ մայրենի լեզվով:

Ուսուցման և կրթության գործընթացները պահանջում են մանկավարժորեն գրագետ և գիտականորեն համակարգված մոտեցումներ: Ներկայիս բազմագործառնության դարաշրջանում հեշտ է մոլորվել ճշմարտի ու կեղծի բավիղներում, մանավանդ որ այսօր հստակորեն ուրվագծված չեն կրթության ու դաստիարակության հասարակական իդեալն ու պահանջարկը: Սակայն մի բան հստակ է. գլոբալացման գլխապտույտ արագությամբ զարգացող իրադարձությունների հորձանուտում ազգերը ձգտում են ետ չմնալ քաղաքակրթության արդի վազքից ու նվաճումներից, հաստատել իրենց տեղն ազգերի ընտանիքում, միաժամանակ փորձելով պահպանել ազգային ուրույն դեմքն ու դիմագիծը:

Իսկ ինչպե՞ս հասնել այդ նպատակներին: Այսօր ցանկացած հասարակության ամենահզոր զենքը առաջադեմ կրթությունն է՝ ապահովելու գիտելիքահենք ամուր ու զարգացած տնտեսություն, իսկ վերջինիս շարժիչ ուժը մրցունակ մասնագետներն են: Քաղաքակրթության արժեքներին ձգտող ամեն մի իրեն հարգող հանրություն այսօր ամեն ինչից առաջ լուծում է ողջ հասարակության

շարունակական ուսուցման, մրցունակ կրթության և լայն առումով՝ ազգային ու համամարդկային արժեքներով դաստիարակության խնդիրները: Այդ արժեքներից մեծագույնը ազգային լեզուն է, որը ոչ միայն միջոց է բոլոր տեսակի գիտելիքների վերարտադրման, հաղորդման ու փոխանցման համար, այլև հզոր զենք՝ ազգային դիմագծով մտավորականներ կերտելու համար:

Ահա այստեղ է, որ մանկավարժությունը՝ որպես գիտություն ուսուցման, կրթության և դաստիարակության մասին [10], դառնում է գիտություններից ամենահամապիտանին ու պահանջարկվածը: Մանկավարժությունը կրթական համակարգում (նաև բուհական), բացի գիտական հիմքերի կիրառումից, անպայմանորեն ստեղծագործական մոտեցում է ենթադրում [11], ինչը հաճախ անտեսվում է: Անձի հումանիտարացմանը, ըստ այդմ՝ նաև կրթական համակարգի գերագույն նպատակի՝ անձի սոցիալականացման իրագործմանը կարող են խոչընդոտել մանկավարժորեն անիրատեսական և հապճեպ որոշումները՝ ավերածություններ առաջ բերելով կրթական ողջ համակարգում, խաթարել գիտելիքների փոխանցման գործընթացը, պատճառ դառնալ ազգային ոգու և արժեհամակարգերի կորստյան:

Եզրակացություն.

1. Հայոց լեզվի ուսուցումը բուհի բակալավրական աստիճանում պարտադիր է այնքան ժամանակ, քանի դեռ չի կարգավորվել և հավաստվել առարկայի դասավանդման գործընթացի բարելավումը հանրակրթական աստիճանում:

2. Ոչ բանասիրական բուհերում հայոց լեզվի դասընթացը նպատակաուղղված պետք է լինի գիտական գրավոր խոսքի համակողմանի ուսուցմանը:

3. Հայոց լեզվի ուսուցումը, տեխնիկական բուհի կրթական երեք ծրագրերում կազմելով գիտական գրավոր խոսքի ուսուցման փոխկապակցված եռաստիճան շղթա, հիմք կհանդիսանա ոչ միայն ապագա մասնագետների՝ հաղորդակցական ձիրքերի զարգացման, գրավոր խոսք և մասնագիտորեն գրագետ ակադեմիական գրագրություն վարելու հմտությունների և կարողությունների ձևավորման համար, այլև կնպաստի՝ իրագործելու դասընթացի հումանիտար բովանդակությամբ թելադրվող առաքելությունը, այն է՝ անձի սոցիալականացումը, ազգային դիմագծով մտավորականի կերտումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայոց լեզու և գրականություն – 1,2» դասընթացի ծրագիր. վերահաստատված ՀԱՊՀ ուսումնական մասի կողմից 15.10.2018թ.:
2. **Պետրոսյան Հ.Ց., Մարտիրոսյան Ա.Թ.** Գործարար և գիտական հայոց լեզու. Ու. ձեռնարկ.- Ե., 2015:

3. ՀԱՊՀ «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի (ասպիրանտուրա և հայ-ցորդություն)» ուսումնական պլան. ՀԱՊՀ հրաման՝ թիվ 01-11/403, 21.07.2007թ.:
4. Պետրոսյան Հ.Յ. Գիտական գրավոր խոսք. Ուս. ձեռնարկ.- Ե., 2014:
5. Պետրոսյան Հ.Յ. Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք.- Ե., 2010:
6. Волков Ю. Как написать диплом, курсовую, реферат, Ростов Н/Д., 2005.
7. Кузин Ф., Диссертация. Методика написания. Правила оформления. Порядок защиты / Под. ред. В. Абрамова, М., 2008.
8. Солганик Г. Стилистика текста.- М., 2000.
9. Պետրոսյան Հ.Յ., Դիդակտիկա. ավանդական և նորագույն տեխնոլոգիաների համադրումը ուսուցման գործընթացում. ՀԱՊՀ Լրագրեր. Գիտական հոդվածների ժողովածու. Մաս 3, Ե., 2019, էջ 850-862:
10. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն. Ե., 2005:
11. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր.- Ե., 1981:

А.Ц. ПЕТРОСЯН

НЕОБХОДИМОСТЬ И ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ НАУЧНОЙ ПИСЬМЕННОЙ РЕЧИ НА РОДНОМ ЯЗЫКЕ В ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММАХ ВУЗА

Рассматриваются необходимость и особенности обучения научной письменной речи по аспирантской образовательной программе. Для эффективного обучения академической письменности в техническом вузе предлагается наиболее целесообразное перераспределение данного количества часов, отведенных курсу армянского языка в бакалавриате, магистратуре и аспирантуре.

Ключевые слова: образовательные программы, научный текст, требования к содержанию и стилистике, целесообразное распределение количества часов.

H.Ts. PETROSYAN

THE NECESSITY AND PECULIARITIES OF TEACHING THE SCIENTIFIC WRITTEN LANGUAGE OF THE MOTHER TONGUE IN THE CURRICULA OF A HEE

The necessity and peculiarities of teaching the scientific written language in the post-graduate curriculum are considered. To efficiently teach technical writing in an engineering HEE, a more expedient version of redistribution of the hours of the Armenian language among the undergraduate, graduate and post-graduate courses is proposed.

Keywords: curricula, scientific text, content and linguistic requirements, expedient redistribution of hours.